ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

## 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

## DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
## Challenges and Opportunities of 21st Century

## РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
## вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

*Հրատարակվում է*
*ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ*

***Խմբագրական խորհրդի նախագահ՝***

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**
*ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

***Խմբագրական խորհուրդ՝***

**ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
**ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ** - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ** - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
**ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ** - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ** - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ** - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
**ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և**
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

# ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

*Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,*

*շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:*

*Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:*

*Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:*

*Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:*

*Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:*

*Շնորհակալ եմ ուշադրության համար:*

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**
*ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր*

**АРПЕНИК МУРАДЯН**

## ЭКОНОМИЧЕСКАЯ СТРАТИФИКАЦИЯ НАСЕЛЕНИЯ В РА

***Ключевые слова:*** *стратификация, уровень жизни, факторы, экономическая активность, проблема, бедность, благосостояние*

*В статье выделены и изучены стратификация населения РА по экономической активности, частично: экономически активное население по занятым и безработным, а в свою очередь разделяя занятых на работающих по найму, работадателей и самозанятых. Определенное место предаставлено стратификации экономически активного населения по уровню образования, по видам экономической деятельности, по секторам. Для оценки стратификации населения особенно подчеркнули важность изучения доходов и расходов населения по квинтильным и децильным группам.*

**ARPENIK MURADYAN**

## ECONOMIC STRATIFICATION OF THE POPULATION IN THE RA

***Key words:*** *lamination, living standards, factors, economically active, problem, poverty, welfare*

*The article highlights and studies the stratification of the population of the Republic of Armenia by economic activity, especially: the economically active population by employed and unemployed, and dividing the employed into employees, employers and self-employed. A certain place is betrayed to the stratification of economically active population by the level of education, by economic activity and by sectors. To assess the stratification of the population, the importance of studying the incomes and expenditures of the population by quintile and decile groups was especially emphasized.*

**ՎԱՐՈՒԺԱՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ**
*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ*

## ՄԱՔՍԱՍԱԿԱԳՆԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

***Հիմնաբառեր.*** *սակագին, մաքսատուրք, մաքսասակագնային կարգավորում, մաքսային քաղաքականություն*

*Հոդվածում բացահայտվել են ՀՀ-ում մաքսասակագնային կարգավորման հիմնական խնդիրները՝ կապված ՀՀ ԵԱՏՄ անդամակցության հետ: Մասնավորապես՝ քննարկվել են ՀՀ ԵԱՏՄ մաքսատուրքերի միասնական դրույքաչափերին անցման երրորդ երկրներից ներկրվող ապրանքների գծով սպասվելիք թանկացումներին և բնակչության սոցիալական վիճակի վատթարացմանը վերաբերող խնդիրներ: Կատարվել են առաջարկներ նշված խնդիրների լուծման համար:*

Տնտեսական հարաբերությունների պետական կարգավորման հիմնական գործիքներից մեկը մաքսային քաղաքականությունն է, որի իրականացման միջոցներից է մաքսասակագնային կարգավորումը: Մաքսային քաղաքականության իրականացման ցանկալի մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ մաքսասակագնային կարգավորման արդյունավետ ու գործուն համակարգ, որը ենթադրում է ներմուծման և արտահանման հոսքի վրա գնային ազդեցություն՝ պետական սահմանի հատման գործընթացում:

Արտաքին տնտեսական կապերի պետական կարգավորման ժամանակակից համակարգերի հիմնական առանձնահատկությունն է դրանց համապարփակ նորմատիվա-իրավական բազայով ապահովվածությունը: Գործուն օրենսդրական բազան երաշխավորում է պետական կարգավորման իրավական կայունություն: Ընդունվում են հատուկ օրենքներ, օրենսդրական ակտեր, որտեղ նշվում են ինչպես գործադիր իշխանության մարմինների իրավասության շրջանակները, այնպես էլ արտաքին առևտրային գործունեության մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:

Մաքսասակագնային կարգավորմանն ուղղված օրենսդրության բովանդակությունը, դրանում կատարվող փոփոխությունները կախված են միջազգային առևտրին տվյալ երկրի մասնակցության աստիճանից և այդ երկրի զարգացման մակարդակից:

Մաքսային սակագինը պետության մաքսային տարածք ներմուծվող և այդ տարածքից արտահանվող, մաքսատուրքով հարկվող ապրանքների համակարգված ցանկ է:

Սակագնային կարգավորումը որոշում է ապրանքների մաքսային հարկման մեթոդաբանությունը, սակագների և տուրքերի տեսակները, մաքսային արտոնությունների տրամադրման կարգը, ինչպես նաև այն գործողությունների ամբողջությունը, որ վերաբերում է ԱՏԳ սուբյեկտներին ներմուծման-արտահանման գործողություններ իրականացնելիս:

Համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող միասնացման գործընթացներն ավելի են խորացնում տարբեր երկրների տնտեսական կապերը, որոնք ուղեկցվում են այդ երկրների միջև ապրանքների, ծառայությունների, մտավոր սեփականության օբյեկտների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժի ակտիվացմամբ: Արտաքին առևտրային կապերը ձևավորվում են տվյալ երկրի տնտեսական կայունացման ու զարգացման պահանջներից ելնելով: Սովորաբար, փոքր երկրները, այդ թվում՝ նաև ՀՀ-ն, իրենց արտաքին տնտեսական կապերը չեն կառուցում այլ երկրներում տնտեսական և քաղաքական ազդեցություն ունենալու համար, այլ ցանկանում են ստեղծել փոխհամաձայնության վրա ձևավորվող հարաբերություններ: Այդ երկրները գերադասում են ունենալ ազատ տնտեսական հարաբերություններ, սակայն սեփական տնտեսության որոշ ճյուղերի նկատմամբ ձգտում են վարել հովանավորչական քաղաքականություն: Փոքր երկրները արտաքին տնտեսական կապեր են հաստատում նաև տարածաշրջանային երկրների հետ տնտեսական սերտաճման համար, որի նպատակը տնտեսական աճի ապահովումն է: Տարածաշրջանային համագործակցությունն իրականացվում է տարածաշրջանի երկրների շահերը շոշափող համատեղ ծրագրերի մշակման ու իրականացման, տնտե-

սական սերտաճման ապահովման, ազատ առևտրի, մաքսային միության և նմանատիպ այլ կառույցներին անդամագրվելու միջոցով՝ այդ երկրների ընդհանուր շուկայի ձևավորման համար: Այսօրվա դրությամբ ստեղծված է միջազգային տնտեսական հարաբերությունների կարգավորման համակարգ, որն ամրագրված է Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) ստեղծման մասին 1944 թ. համաձայնագրում: Առևտրի համաշխարհային կազմակերպության պաշտոնապես հայտարարված նպատակն է ապրանքների և ծառայությունների ազատ առևտրի համար պայմանների ստեղծման ճանապարհով միջազգային տնտեսական զարգացման ապահովումը:

ՀՀ-ն ԱՀԿ անդամ է դարձել 2003 թ. փետրվարի 5-ին, որը կարևոր իրադարձություն էր ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական տեսակետից, քանի որ դրանով հաստատվում է ՀՀ տնտեսության ազատականացման և առևտրի համաշխարհային համակարգին ինտեգրման ձգտումը: Զարգացող երկրների նկատմամբ Եվրոպական տնտեսական համագործակցության ընդհանուր քաղաքականության մեջ մեծ տեղ է հատկացվում մաքսային կարգավորմանը: Չնայած միջազգային առևտրում մաքսային սակագների դերը զգալիորեն նվազեցվում է, այնուհանդերձ դրանք դեռ զարգացող երկրների համար ապրանքների մուտքի գլխավոր կարգավորիչներից են:

Արդյունաբերական զարգացած երկրներում մաքսային սակագները, որպես կանոն, բարդ են, այսինքն՝ միևնույն ապրանքը, ծագման երկրից կախված, հարկվում է տարբեր մեծության մաքսատուրքերով: Արդյունաբերական զարգացած երկրների մաքսային սակագները պարունակում են նաև արտոնյալ մաքսատուրքեր, որոնցով հարկվում են զարգացող երկրներից ներմուծվող ապրանքները: Զարգացած երկրներում մաքսային սակագների սահմանափակող գործառույթը հիմնականում կիրառվում է մի շարք ապրանքների նկատմամբ, այսպես կոչված՝ մաքսատուրքերի աստիճանակարգված մեթոդով, որի հիմքում ապրանքների մշակվածության աստիճանն է:

Զարգացող երկրների ներմուծման կարգավորման գործընթացում մեծ տեղ է հատկացվում մաքսային սակագներին: Այդ երկրներ ներմուծվող ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսատուրքերի միջին մակարդակը շատ ավելի բարձր է, քան արդյունաբերական զարգացած երկրներ ներմուծվող ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսատուրքերի մակարդակը: Սա պայմանավորված է, առաջին հերթին, նոր ստեղծվող արդյունաբերական ճյուղերի պաշտպանության անհրաժեշտությամբ և նրանով, որ մաքսատուրքերը պետական բյուջեի համալրման կարևորագույն աղբյուր են հանդիսանում:

Զարգացած երկրները հանդես են գալիս արտահանման մաքսատուրքերի դեմ և համարվում են ներմուծման մաքսատուրքերի նվազեցման քաղաքականության նախաձեռնողներ: Իսկ թույլ զարգացած, զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում զգացվում է պետության պաշտպանության կարիքը: Ներկայումս գործում են սակագնային կարգավորման միասնական սկզբունքներ և նորմեր, որոնց մեծ ուշադրություն են դարձնում միջազգային մի շարք կազմակերպություններ՝ Համաշխարհային մաքսային կազմակերպությունը, Առևտրի համաշխարհային կազմակերպությունը, Միջազգային արժութային հիմնադրամը և այլն:

Մաքսասակագնային կարգավորումը լուծում է հետևյալ կարևորագույն խնդիրները.

- երկրի տնտեսական անվտանգության երաշխավորում և, համաշխարհային տնտեսությանն, ինտեգրման պահանջների համաձայն, մաքսային արգելքների աստիճանական վերացում,
- օպտիմալ հավասարակշռության ապահովում արտաքին տնտեսական կարգավորիչների կայունության և շարժունակության միջև, ինչն էլ ստեղծում է տնտեսական իրավիճակի փոփոխության նկատմամբ օպերատիվ արձագանք,
- արտահանման մեծ ներուժ ունեցող արտադրությունների զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծում,
- միջազգային շուկայում մրցունակ հայաստանյան արտադրանքի առաջխաղացման համար պայմանների ստեղծում,
- արտասահմանյան արտադրողների անբարեխիղճ մրցակցության հակազդման արդյունավետ համակարգի ստեղծում, ինչպես նաև պատասխան միջոցների ձեռնարկում՝ միջազգային ասպարեզում ազգային տնտեսական շահերի պաշտպանության նպատակով:

Մաքսասակագնային միջոցները կիրառվում են այն ժամանակ, երբ մաքսային մարմինների կողմից իրականացվում է ապրանքների մաքսային ձևակերպում և հսկողություն: ԱՏԳ կարևորագույն տնտեսական կարգավորիչը մաքսատուրքն է: Ներմուծման մաքսատուրքերը կարգավորում են ապրանքների ներմուծումը, այդ պատճառով էլ դրանց փոփոխությունն ազդում է ներքին արտադրության վրա: Մաքսատուրքերը նվազեցնելիս ուժեղանում է հայրենական արտադրության վրա օտարերկրյա մրցակիցների ճնշումը, և հայրենական արտադրողները դուրս են մղվում շուկայից: Սակայն, սա, միաժամանակ, օգնում է, որ հայրենական արտադրողները բարձրացնեն արտադրության մրցունակությունն ու արդյունավետությունը:

Մաքսատուրքերը որոշվում են համաշխարհային և ազգային գների տարբերության հիման վրա: Եթե մաքսատուրքը սահմանվում է այդ տարբերությունից բարձր, ապա կսահմանափակվի ներմուծվող ապրանքների մուտքը հայրենական շուկա, այսինքն՝ կգործի մաքսատուրքի հովանավորչական գործառույթը: Իսկ եթե ներմուծման մաքսատուրքերը սահմանվեն այդ տարբերությունից ցածր, ապա կստեղծվեն լայն հնարավորություններ ապրանքների ներմուծման համար: Շուկայական տնտեսության պայմաններում պետությունն իրականացնում է ԱՏԳ կարգավորում՝ երկրի անվտանգության և ազգային շահերի պաշտպանության ապահովման նպատակով: Պետական մարմինների գործունեությունը ԱՏԳ կարգավորման ուղղությամբ գործնականում իրականացվում է աշխարհի շատ երկրներում, սակայն դրա ծավալները, ձևերը և մեթոդները, նպատակները և խնդիրները որոշվում են յուրաքանչյուր երկրի կողմից՝ ելնելով դրա չափերից, դիրքից, ներքին և արտաքին քաղաքականությունից:

ԱՏԳ պետական կարգավորումը իրականացվում է տարբեր մեթոդներով, որոնք, կախված դասակարգված չափանիշներից, բաժանվում են ըստ տնտեսական, վարչական, սակագնային և ոչ սակագնային մեթոդների: Վարչական մեթոդները ներառում են պե-

տության սահմանած կանոնները, նորմատիվներն ու սահմանափակումները, որոնց օգնությամբ վերջինս իրականացնում է անուղղակի ներգործություն ԱՏԳ սուբյեկտների վրա՝ ծառայեցնելով դրանց գործունեությունը հասարակության շահերին: Վարչական մեթոդներն ըստ էության հակասում են շուկայական հարաբերությունների բնույթին, և այդ իսկ պատճառով դրանց կիրառման ոլորտն աստիճանաբար նեղանում է:

Շուկայական տնտեսության և ԱՏԳ ազատականացման պայմաններում մաքսատուրքերը դարձել են ԱՏԳ կարևոր տնտեսական կարգավորիչներ: Պետությունը մաքսատուրքերի օգնությամբ կարող է ընդլայնել համապատասխան ապրանքների արտահանումը կամ ներմուծումը կամ սահմանափակել դրանք, հայրենական արտադրողների ապրանքները և արտասահմանյան մրցակիցների նմանատիպ ապրանքները դնել հավասար տնտեսական պայմաններում, իրականացնել համապատասխան տնտեսական, գիտատեխնիկական, բնապահպանական քաղաքականություն:

Մաքսատուրքը արժեքային կատեգորիա է, և պահանջվում է անհատական մոտեցում յուրաքանչյուր որոշակի ապրանքի նկատմամբ դրա ազգային և համաշխարհային ծախքերը և գները համակարգելիս, սպառողական հատկանիշների պարամետրերը հաշվառելիս:

Մաքսասակագնային կարգավորման տարբեր մեթոդների կիրառման և աշխարհի տարբեր երկրների արտաքին տնտեսական գործունեության զարգացման տնտեսական աշխարհագրական և պատմական պայմանների տարբերակման արդյունքում ձևավորվել են մաքսասակագնային քաղաքականության հետևյալ 5 հիմնական տեսակները[1].

1) **Էքսպանսիոնիստական,** որը կողմնորոշված է առավելապես արտաքին տնտեսական կապերի կառուցվածքում գերիշխող դիրքի գրավմանը,
2) **կայունացնող,** որն ուղղված է պատմականորեն ձևավորված տարածաշրջանային միջպետական շուկայի և դրա կազմում պետությունների մրցակցային դիրքերի պահպանմանը,
3) **կառուցվածքային,** որն ուղղված է արտաքին տնտեսական համակարգի ներուժի օգտագործմանը վերակառուցման գործընթացների արագացման և ազգային տնտեսական համալիրի զարգացման նպատակով,
4) **ֆիսկալային,** որն ուղղված է արտաքին տնտեսական գործունեության իրականացումից և հատկապես ներմուծման գործառություններից պետության ընթացիկ եկամուտներն առավելագույնի հասցնելուն,
5) **գործիքային,** որը կապված է արտաքին տնտեսական համալիրից ազգային տնտեսական համակարգի առանձնացման հետ կարգավորվող տնտեսության շրջանակներում արտաքին տնտեսական համակարգի ներուժի օգտագործման նպատակի հետ:

Մաքսային սակագինը ներկայացնում է վճար, որը գանձվում է ապրանքների մաքսային արժեքից, դրանց՝ պետության մաքսային սահմանը հատելու դեպքում՝ նախապես

[1] Թ. Թորոսյան, Հայաստանի արտաքին տնտեսական կապերի զարգացման արդի միտումները, «Էկոնոմիկա», թիվ 10, Եր., 1992, էջ 26:

սահմանված դրույքաչափերով:

*Մաքսատուրքի հիմնական նպատակներն են.*

- մաքսային տարածք ապրանքների ներմուծման ապրանքային կառուցվածքի արդյունավետության ապահովումը,
- ապրանքների ներմուծման և արտահանման, արժութային եկամուտների և ծախսերի արդյունավետ հարաբերակցության պահպանումը,
- ապրանքների արտադրության և սպառման կառուցվածքներում փոփոխությունների համար պայմանների ստեղծումը,
- ազգային տնտեսության պաշտպանություն ապահովումն արտասահմանյան մրցակցության անբարենպաստ ազդեցությունից,
- համաշխարհային տնտեսությանն ազգային տնտեսության արդյունավետ ինտեգրման պայմանների ապահովումը:

*Մաքսատուրքը բնութագրվում է հետևյալ հիմնական հատկանիշներով.*

1. դա պետական բյուջե գանձվող պարտադիր վճար է,
2. հատուցվում է, քանի որ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար իրավունքի ձեռքբերման դիմաց վճար է,
3. չունի պարբերականության հատկանիշներ,
4. հայտարարատուի կողմից դրա վճարման իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի,
5. ապահովվում է պետության կողմից պարտադրման միջոցով[1]:

Սովորաբար, մաքսատուրքերի գործողության ժամկետը չի սահմանվում, դրանք գործում են մշտապես, մինչև կկատարվեն համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարումը:

*Մաքսատուրքերն ունեն հետևյալ գործառույթները՝*

- Ֆիսկալ, որը վերաբերվում է ինչպես ներմուծման, այնպես էլ արտահանման մաքսատուրքերին, որոնք համարվում են պետական բյուջեի եկամուտների համալրման աղբյուր:
- ՀՀ-ում իրականացվող մաքսասակագնային կարգավորման միջոցառումներն ունեն միակողմանի բնույթ և հիմնականում ապահովում են մաքսատուրքի ֆիսկալ գործառույթի իրականացումը: Ընդ որում, արտահանման մաքսատուրքերը բյուջեի համալրման աղբյուր չեն, քանի որ դրանց դրույքաչափերը սահմանված են 0%:
- Հովանավորչական, որը վերաբերում է ներմուծման մաքսատուրքերին, որոնց միջոցով պետությունը տեղական արտադրողներին պաշտպանում է օտարերկրյա մրցակցությունից:
- Կարգավորող, որը վերաբերում է ինչպես ներմուծման, այնպես էլ արտահանման մաքսատուրքերին, որոնք ուղղված են ներքին և արտաքին շուկաներում մրցակցային արդյունավետ միջավայրի ձևավորմանը:

---

[1] Бакаев О.Ю., Таможенное право, 2009, с 139–140.

- Հավասարակշռող, որը վերաբերում է արտահանման մաքսատուրքերին, կանխվում է ապրանքների արտահանումը համաշխարհայինից ցածր գնով:

2013 թ. սեպտեմբերի 3-ին Հայաստանը հայտարարեց Մաքսային միությանը, իսկ հետագայում՝ Եվրասիական տնտեսական միությանը անդամակցելու մասին[1]:

*2015 թ. հունվարի 2-ին Հայաստանը միացավ Եվրասիական տնտեսական միությանը:*

Հայաստանի կողմից Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելուց հետո ավելի քան 752 անվանում ապրանքների նկատմամբ, այսպես կոչված՝ անցումային շրջանում կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի հատուկ՝ միասնական սակագնից ցածր դրույքաչափեր, 18 անվանում ապրանքների նկատմամբ (գյուղատնտեսական մթերքներ)՝ ավելի բարձր դրույքաչափեր: Բացի դրանից, ՀՀ տնտեսության վրա մաքսատուրքերի բացասական հետևանքները հնարավորինս մեղմելու նպատակով 5 տարուց ավելի անցումային ժամանակահատված է նախատեսվել հիմնականում սպառողական զամբյուղում ներառված առավել կարևոր ապրանքների՝ մսի, մսամթերքի, դեղամիջոցների, ինչպես նաև արդյունաբերության համար հումք հանդիսացող ապրանքների՝ պոլիմերային հումքի, փայտանյութի, էներգակիրների և տրանսպորտային միջոցների նկատմամբ:

ՀՀ-ն ԵԱՏՄ-ին անդամակցելուց հետո 2016 թ. ընդամենը 8 ապրանքատեսակի գծով է միացել ԵԱՏՄ միասնական մաքսատուրքի դրույքաչափերին, որից 7 ապրանքատեսակի մասով պահպանվել են ՀՀ-ի համար նախկինում գործող մաքսատուրքի դրույքաչափերը և միայն 1-ի մասով կատարվել է բարձրացում 2%-ով (մեկուսացված հաղորդալարեր): 2017 թ. ՀՀ-ն ԵԱՏՄ միասնական մաքսատուրքի դրույքաչափերին է միացել ևս 8 ապրանքատեսակի գծով, որից 4-ի մասով պահպանել է ՀՀ-ի համար նախկինում գործող մաքսատուրքի դրույքաչափերը, 3-ի մասով արձանագրել է բարձրացում 3%-ով (ռետինե խցիկներ ավտոմեքենաների համար, ապակյա շշեր) իսկ 1-ի մասով՝ ՀՀ-ի համար ներկա գործող դրույքաչափերից 3,5% ցածր դրույքաչափ:

2018 թ. ՀՀ-ն պետք է միանա ԵԱՏՄ միասնական մաքսատուրքի դրույքաչափերին 14 ապրանքատեսակի մասով, որից 7-ի մասով պահպանվելու են նախկինում գործող դրույքաչափերը, իսկ մյուս 7-ի մասով (պահածոյացված ձուկ, ձկնկիթ, սննդի մեջ օգտագործվող խառնուրդներ, մարդկային արյուն, կապար) արձանագրվելու է մաքսատուրքի դրույքաչափի բարձրացում 2–3%-ով:

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, մաքսատուրքերի հիմնական բարձրացումներ ՀՀ-ի համար նախատեսված են 2020 թ. սկսած՝ ավտոտրանսպորտային միջոցների և մի շարք այլ ապրանքատեսակների գծով:

Մաքսասակագնային կարգավորման արդյունավետության բարձրացման նպատակով ԵԱՏՄ շրջանակներում կարևորում ենք հետևյալ միջոցառումների իրականացումը.

- ԵԱՏՄ անդամ պետությունների հարկային և մաքսային օրենսդրությունների ներդաշնակեցում,
- սեզոնային մաքսատուրքերի կիրառում,

[1] «Հայաստան. ֆինանսեր և էկոնոմիկա», № 7-8 (84–85), հուլիս-օգոստոս, 2007, էջ 2–3:

- գիտականորեն հիմնավորված մոտեցում յուրաքանչյուր ապրանքատեսակի համար մաքսատուրքի դրույքաչափ սահմանելիս,
- հակազդման միջոցառումների կիրառում կանոնակարգող օրենսդրության մշակմամբ,
- արտահանման մաքսատուրքերի կիրառում, մասնավորապես հումքային նշանակության ապրանքների նկատմամբ:

Աղյուսակ 1

***Մի շարք ապրանքատեսակների ներմուծման մաքսային դրույքաչափերի փոփոխությունը***

| ԱՏԳ ԱԱ կոդը | Ապրանքի անվանումը | ՀՀ-ում և ՄՄ-ում գործող ներմուծման մաքսային դրույքաչափերի տարբերությունը | ԵՏՄ մաքսային դրույքաչափի ուժի մեջ մտնելու ժամկետը |
|---|---|---|---|
| 0203 | Խոզի միս | մինչև 55% | սկսած 2021 թ. |
| 0207 | Ընտանի թռչնի միս և մսամթերք | 15% | սկսած 2017 թ. |
| 0402 | Կաթ և սերուցք՝ խտացրած կամ քաղցրացրած, կաթի փոշի | 8.3-12.3% | սկսած 2018 թ. |
| 0405 | Կարագ, կաթնային մածուկ | 5-12.5% | սկսած 2018 թ. |
| 0713 | Լոբազգի բանջարեղեն չորացրած | 13.3-14% | սկսած 2019 թ. |
| 0902 | Թեյ | 7.5-8.1% | սկսած 2018 թ. |
| 1006 | Բրինձ | 13.3% | սկսած 2019 թ. |
| 1103 | Ձավարեղեն | 0-3.3% | 2015 |
| 1107 | Ածիկ | 7% | սկսած 2018 թ. |
| 1512 | Արեւածաղկի, քրքումի կամ բամբակի ձեթ | 5% | սկսած 2018 թ. |
| 1517 | Մարգարին, խառնուրդ կամ պատրաստի մթերք կենդանական կամ բուսական ճարպից կամ յուղից | 5-8.3% | սկսած 2020 թ. |
| 1902 | Մակարոնեղեն | 3-5% | 2015 թ. |
| 2309 | Կենդանիների կեր | 0-7.5% | 2020 թ. |
| 3004 | Դեղամիջոցներ՝ կշռածրարած | 7.7-12.3% | սկսած 2019 թ. |
| 31 | Պարարտանյութեր | 8-9% | սկսած 2018 թ. |
| 3005 | Բամբակ, թանզիֆ, վիրակապ և նման միջոցներ | 8.3% | սկսած 2019 թ. |
| 3209 | Ներկեր և լաքեր՝ լուծած ջրային միջավայրում | 12.9% | սկսած 2018 թ. |
| 3402 | Լվացող և մաքրող միջոցներ | 12.3-13.3% | սկսած 2019 թ. |
| 4803 | Անձեռոցիկ, սփռոց և թղթի այլ տեսակ տնտեսական-կենցաղային կամ սանիհիգիենիկ նշանակության, թաղանթանյութից բամբակ, պաստառ | 12.5-13.8% | սկսած 2019 թ. |
| 4818 | Զուգարանի թուղթ և թղթե այլ տնտեսական-կենցաղային կամ սանիհիգիենիկ նշանակության իրեր, հագուստի պարագաներ | 2.5-8.5% | 2015 թ. |
| 6116 | Ձեռնոց, թաթման և միտենկա, տրիկոտաժե | 0-4% | 2015 թ. |
| 6302 | Սպիտակեղեն անկողնու, ճաշի, | 5.7-8.3% | 2020 թ. |

| | | | |
|---|---|---|---|
| | զուգարանային և խոհանոցի | | |
| 6908 | Սալիկներ երեսպատման խեցեգործ՝ ջնարակած | 2.5-3% | 2015 թ. |
| 6912 | Ամանեղեն ճաշի, խոհանոցի և այլ տնտեսական արտադրանք՝ ոչ ճենապակե | 7.3-8.3% | 2020 թ. |
| 7106 | Արծաթ | 18.10% | սկսած 2019 թ. |
| 7108 | Ոսկի | 18.1-19% | սկսած 2019 թ. |
| 8528 | Ընդունիչ սարքավորում՝ հեռուստատեսային կապի | 6.7% | 2015 թ. |
| 8701 | Տրակտորներ | 13-14% | 2015 թ. |
| 8702 | Ավտոբուսներ | 8.8-24% | 2020 թ. |
| 8703 | Ավտոմեքենաներ | կախված տարիքից և շարժչի ծավալից մինչև 200% | 2020 թ. |
| 8704 | Բեռնատարներ | կախված տարիքից և շարժչի ծավալից մինչև 150% | 2020 թ. |
| 9101 | Ժամացույց՝ իր վրա կամ հետ կրելու, թանկարժեք մետաղից կամ մետաղից՝ երեսապատ թանկարժեք մետաղով | 5.7-7.3% | 2015 թ. |
| 9401 | Կահույք նստելու, ոչ 9402 դիրքի և դրա մասեր | 5% | 2015 թ. |
| 9503 | Եռանիվ հեծանիվ և նման անվավոր խաղալիք, սայլակ՝ տիկնիկի, տիկնիկ, այլ խաղալիքներ | մինչև 3,8% | 2015 թ. |
| 9613 | Վառիչներ և դրանց մասեր, ոչ կայծքար և պատրույգ | 5% | 2015 թ. |
| 9615 | Սանրեր՝ մազերի, բռնիչներ, սեղմակ գանգրացման, բիգուդի և նման իրեր, դրանց մասեր | 5% | 2015 թ. |
| 9619 | Մանկական խանձարուրներ և նման արտադրանք տարբեր նյութերից | 0-6.2% | 2015 թ. |
| Տարբեր | Սերմնացու | մոտ 5%՝ կախված տեսակից | Ժամկետը կախված է տեսակից |

**ВАРУЖАН МУРАДЯН**

## ЗАДАЧИ ТАМОЖЕННО-ТАРИФНОГО РЕГУЛИРОВАНИЯ РА

***Ключевые слова:*** *тариф, таможенная пошлина, таможенное регулирование, таможенная политика*

*В статье обсуждены и выявлены основные задачи таможенно-тарифного регулирования таможенной системы РА, в связи с членством РА в ЕЭС. В частности обсуждены увеличение цен на товары, импортируемые из третьих стран в связи с переходом на единые таможенные ставки. Это приведет к ухудшению социального положения населения. Были сделаны конкретные предложения для решения этих проблем.*

**VARUZHAN MURADYAN**

## *CUSTOMS ISSUES REGULATIONS IN RA*

***Key words:*** *customs tariff, customs duty, customs tariff regulations, customs policy*

*In this article were discussed and discovered the main issue of RA customs tariffs, when RA became a member of EEU (Eurasian Economic Union). Were discussed RA EEU customs duty expected increase for imports from 3rd countries (non of EEU member) and population economic aggravation issues.Were suggested exact solution for particular problem.*

**ԹԱԹՈՒԼ ՄԿՐՏՉՅԱՆ**
*Տնտեսագիտության դոկտոր, դոցենտ,ՀՊՏՀ*

**ՎԱՉԳԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**
*Ասպիրանտ, ՀՊՏՀ*

## ՆԵՐՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ ԿԱՅՈՒՆԱՑՆՈՂ ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

***Հիմնաբառեր.*** *պետական պարտք, բյուջեի առաջնային հաշվեկշիռ, պարտքի կայունություն, իրական աճ, իրական տոկոսադրույք*

*Վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամն էլ ավելի խորացրեց երկրների պարտքային խնդիրները, և ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ երկրների մեծամասնությունում պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը հասավ աննախադեպ մակարդակի: Հետճգնաժամային ներկա փուլում, երբ ամբողջ աշխարհում վերականգնվում են աճի տեմպերը, ինչպես տեսնում ենք, երկրների մեծ մասը ձախողում է պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության կրճատման ուղղությամբ վարվող քաղաքականությունը:*

Պետական պարտքի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն, որպես երկրի ամենախոշոր պարտքային պորտֆել, լուրջ ազդեցություն է թողնում ինչպես մակրոտնտեսական իրավիճակի, այնպես էլ սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացների վրա: Պարտքի խելամիտ կառավարումը կարևոր դեր է խաղում պետական հատվածի ֆինանսների կառավարման գործում: Այն պահանջում է պարտքի կառավարման գործուն համակարգի կիրառում, որը անբարենպաստ պայմաններում կարող է նվազեցնել բացասական ազդեցությունները և մեղմել հավանական ռիսկերը: